


**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



- Մարզկենտրոնը՝*
ք. Արտաշատ
- Տարածաշրջանները՝*
Արարատ
Արտաշատ
Մասիս
- Քաղաքները՝*
Արտաշատ
Մասիս
Արարատ
Վեդի

| | |
|--|-----------------|
| Տարածքը | 2 090 քառ. կմ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 7.0% |
| Համայնքներ, 2017թ. տարեսկզբի դրությամբ | 95 |
| Քաղաքներ | 4 |
| Գյուղեր | 95 |
| Բնակչության թվաքանակը 2017թ. տարեսկզբի դրությամբ | 257.8 հազ. մարդ |
| <i>այդ թվում՝</i> | |
| քաղաքային | 72.4 հազ. մարդ |
| գյուղական | 185.4 հազ. մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 8.7 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 28.1 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 156 623.3 հա |
| այդ թվում՝ վարելահողեր | 25 160.6 հա |

Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը (ծովի մակերևույթից 1 600 - 2 300 մ բարձրության վրա):

ՀՀ Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Արցախ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին:

2017թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատ-վածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 12.4 %,
- գյուղատնտեսություն՝ 13.7 %,
- շինարարություն՝ 7.6 %,
- մանրածախ առևտուր՝ 3.3 %,
- ծառայություններ՝ 1.6 %:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

- ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ավլոհոլային խմիչքների արտադրություն),
- բ) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),
- գ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Արտաշատ քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 19.8 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ավլոհոլային խմիչքների), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (կղմինդրի, աղուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

Արարատ քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. մարդ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

Վեդի քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 11.7 հազ. մարդ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսպատման նյութերի,


Էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

Մասիս քաղաքը (2018թ. տարեկգրին՝ 20.5 հազ. մարդ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթից և ստվարաթղթից արտադրատեսակների արտադրություն և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

| | Քանակը | | | | |
|-------------------------------------|--------|-------|-------|-------|-------|
| | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը | 1 172 | 1 184 | 1 446 | 1 557 | 1 623 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | |
| խանութներ | 1 027 | 1 037 | 1 272 | 1 381 | 1 449 |
| կրպակներ | 77 | 75 | 78 | 76 | 75 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| սպառողական ապրանքների շուկաներ | 3 | 3 | 4 | 4 | 4 |
| առևտրի այլ օբյեկտներ | 64 | 68 | 91 | 95 | 94 |

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Քանակը | | | | |
|--|--------|------|------|------|------|
| | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 |
| Պետական նախադպրոցական | 75 | 77 | 77 | 78 | 80 |
| Պետական հանրակրթական | 112 | 112 | 112 | 112 | 112 |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 22 | 23 | 22 | 21 | 21 |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹ | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 4 | 4 | 4 | 4 | 4 |

ՔԱՂԱՔՆԵՐ

| Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ* |
|-----------|--|
| Արտաշատ | 19 802 |
| Մասիս | 20 512 |
| Արարատ | 20 395 |
| Վեդի | 11 675 |

ԳՅՈՒՂԵՐ

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|-----------------------------|-----------|---|
| Արտաշատի տարածաշրջան | | |
| 1 | Աբովյան | 1 387 |
| 2 | Ագատավան | 2 905 |
| 3 | Այգեգարդ | 2 949 |
| 4 | Այգեպատ | 1 500 |
| 5 | Այգեստան | 2 434 |
| 6 | Արաքսավան | 846 |
| 7 | Արևշատ | 2 290 |

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|----------------------------|---------------|---|
| 8 | Բերդիկ | 853 |
| 9 | Բերքանուշ | 1 857 |
| 10 | Բաղրամյան | 1 838 |
| 11 | Բարձրաշեն | 1 620 |
| 12 | Բյուրական | 1 281 |
| 13 | Բուրաստան | 1 923 |
| 14 | Գետազատ | 2 001 |
| 15 | Դայար | 2 459 |
| 16 | Դեղձուտ | 973 |
| 17 | Դիմիտրով | 1 294 |
| 18 | Դիտակ | 693 |
| 19 | Դվին | 2 866 |
| 20 | Ոստան | 2 893 |
| 21 | Զրաշեն | 1 694 |
| 22 | Կաքավաբերդ | - |
| 23 | Հովտաշեն | 1 110 |
| 24 | Հնաբերդ | 628 |
| 25 | Լանջազատ | 1 427 |
| 26 | Վերին Դվին | 1 870 |
| 27 | Վերին Արտաշատ | 3 925 |
| 28 | Վարդաշեն | 515 |
| 29 | Կանաչուտ | 1 269 |
| 30 | Մասիս | 1 417 |
| 31 | Քաղցրաշեն | 3 066 |
| 32 | Մխչյան | 4 943 |
| 33 | Մրգավետ | 2 401 |
| 34 | Մրգավան | 1 758 |
| 35 | Մրգանուշ | 1 197 |
| 36 | Շահումյան | 4 157 |
| 37 | Նարեկ | 1 233 |
| 38 | Նորաշեն | 3 548 |
| 39 | Նշավան | 1 485 |
| Արարատի տարածաշրջան | | |
| 1 | Ավշար | 5 162 |
| 2 | Արալեզ | 2 515 |
| 3 | Արարատ | 8 391 |
| 4 | Արմաշ | 2 610 |
| 5 | Այգավան | 4 256 |
| 6 | Գինեվետ | 669 |
| 7 | Գոռավան | 2 610 |
| 8 | Դաշտաքար | 561 |
| 9 | Երասխ | 892 |
| 10 | Եղեգնավան | 1 441 |
| 11 | Զանգակատուն | 1 166 |
| 12 | Շաղափ | 910 |
| 13 | Ոսկետափ | 5 032 |
| 14 | Պարույր Սևակ | 476 |
| 15 | Ուրցալանջ | 155 |
| 16 | Ուրցաձոր | 3 143 |
| 17 | Լանջառ | 223 |
| 18 | Լանջանիստ | 120 |
| 19 | Լուսառատ | 2 665 |
| 20 | Լուսաշող | 655 |

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---------------------------|-------------|---|
| 21 | Նոյակերտ | 1 907 |
| 22 | Նոր կյանք | 2 609 |
| 23 | Նոր ուղի | 883 |
| 24 | Սուրենավան | 2 509 |
| 25 | Սիսավան | 2 191 |
| 26 | Տափերական | 4 000 |
| 27 | Տիգրանաշեն | 155 |
| 28 | Վարդաշատ | 181 |
| 29 | Վանաշեն | 2 590 |
| 30 | Փոքր Վեդի | 3 261 |
| Մասիսի տարածաշրջան | | |
| 1 | Ազատաշեն | 725 |
| 2 | Այնթափ | 9 487 |
| 3 | Արբաթ | 1 857 |
| 4 | Արգավանդ | 1 871 |
| 5 | Արևաբույր | 1 270 |
| 6 | Գեղանիստ | 2 900 |
| 7 | Գետափնյա | 1 456 |
| 8 | Դաշտավան | 2 174 |
| 9 | Դարակերտ | 2 744 |
| 10 | Դարբնիկ | 1 259 |
| 11 | Զորակ | 1 963 |
| 12 | Խաչիառ | 2 014 |
| 13 | Հայանիստ | 2 347 |
| 14 | Հովտաշատ | 3 979 |
| 15 | Ղուկասավան | 1 897 |
| 16 | Մարմարաշեն | 3 471 |
| 17 | Նիգամի | 1 218 |
| 18 | Նորաբաց | 2 452 |
| 19 | Նորամարգ | 2 045 |
| 20 | Նոր Խարբերդ | 7 161 |
| 21 | Նոր Կյուրին | 1 072 |
| 22 | Ջրահովիտ | 1 119 |
| 23 | Ռանչպար | 1 201 |
| 24 | Սայաթ –Նովա | 2 170 |
| 25 | Սիս | 1 465 |
| 26 | Սիփանիկ | 560 |

Ծանոթություն՝

* ՀՀ Արարատի մարզի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2018թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.2%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2017թ.**

| | Ընդամենը | նրանցից՝ | |
|--|----------|---------------------|------------------------|
| | | կանայք ¹ | տղամարդիկ ¹ |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 161 | 4 839 |
| Ծնվածներ, մարդ | 128 | 61 | 67 |
| Մահացածներ, մարդ | 87 | 43 | 44 |
| Ամուսնություններ | 50 | X | X |
| Ամուսնալուծություններ | 10 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 33.6 | X | X |
| Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | |
| նախադպրոցական | 252 | 122 | 130 |
| հանրակրթական | 1 290 | 612 | 678 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 127 | 85 | 42 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 12 | 4 | 8 |
| միջին մասնագիտական | 47 | 24 | 23 |
| բարձրագույն մասնագիտական | - | - | - |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 36 129 | ... | ... |
| Մարզիկներ, մարդ | 50 | 2 | 48 |
| Զբաղվածներ, մարդ | 4 413 | 2 072 | 2 341 |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | 1 | 1 | 0.0 |
| նրանցից՝ գիտության դոկտոր | 0.0 | 0.0 | - |
| գիտության թեկնածուներ | 0.0 | 0.0 | 0.0 |
| ուսուցիչներ | 121 | 106 | 15 |
| բժիշկներ | 17 | ... | ... |
| միջին բուժանձնակազմ | 36 | ... | ... |
| Գործազուրկներ, մարդ | 441 | 203 | 238 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 363 | 804 | 559 |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 312 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 11085 | ... | ... |
| թատրոն | 712 | ... | ... |
| համերգ | - | - | - |
| թանգարան | 732 | ... | ... |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 47 | X | X |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 27 | X | X |
| միջին ծանրության | 14 | X | X |
| ծանր | 6 | X | X |
| առանձնապես ծանր | 0.0 | X | X |

¹ Ցուցանիշները հաշվարկային են: